Հայաստանի Հանրապետություն
Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր (ՈՀԲԾ)
ՎԶՄԲ փոխառության No.8267AM

ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ
(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ –ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

«Ջրօգտագործողների ընկերությունների Վերստուգող հանձնաժողովների անդամների ուսուցում» ISEP/CQS/SW-14/004Tr

Հայաստանի Հանրապետությունը ֆինանսավորում է ստացել Համաշխարհային բանկից՝ **Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի (ՈՀԲԾ)** ծախսերը հոգալու նպատակով և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների համար:

Խորհրդատվական ծառայությունների («Ծառայություններ») ընդհանուր նպատակներն են.

- <Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների մասին> ՀՀ օրենքը
- Վերստուգող հանձնաժողովի ձևավորումը
- Վերստուգող հանձնաժողովի դերերը և գործառույթները (լավագույն պրակտիկա)
- Վերստուգող հանձնաժողովի կանոնակարգը (օրինակելի ձևի տրամադրում)
- Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման ընթացակարգը
- ՀՀ հաշվապահության մասին օրենքի ներածություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով ՋՕԸ-ներին վերաբերող հոդվածներին,
- Հաշվապահական հաշվառման ստանդարտների ներածություն (փոքր-միջին ձեռնարկությունների համար IFRS, IFRS), հատուկ ուշադրություն դարձնելով այն բաժիններին/ստանդարտներին, որոնք կիրառելի են ՋՕԸ-ների հաշվապահական հաշվառմանը
- ՋՕԸ-ների ֆինանսական հաշվետվությունների վերլուծության ներածություն
- Ձեռնարկությունների ռիսկերի կառավարում և ներքին վերահսկման համակարգեր
- Ներածություն ՋՕԸ-ների տեղական հարկմանը
- Ներածություն աուդիտի մասին տեղական օրենսդրությանը,
- Արտաքին աուդիտի ներածություն և աուդիտորական հաշվետվություն (այդ թվում հատուկ ուշադրություն դարձնելով ԱՄՍ 200-ի և ԱՄՍ 700 և ԱՄՍ 705)
- Մասնագիտական էթիկայի ներածություն
- Ստուգման արդյունքների արձանագրության կազմումը (օրինակելի ձևի տրամադրում)
- Ընդհանուր ժողովին ներկայացվող հաշվետվությունը(օրինակելի ձևի տրամադրում)
- <Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանելու և այդ փաստաթղթերի կազմման կարգը հաստատելու մասին>ՀՀ կառավարության N525 որոշումը (անհրաժեշտ հոդվածներ)
- <Քաղաքացիների դիմումների և բողոքների քննարկման կարգը> ՀՀ օրենքը (անհրաժեշտ հոդվածներ)
- Վերստուգող հանձնաժողովի և ՋՕ ընկերության աշխատանքների թափանցիկության ապահովում, շփումներ ջրօգտագործողների հետ

Ենթադրվում է, որ խորհրդատվական ծառայությունները կսկսվեն **2015թ. մարտին**: Հանձնարարության տևողությունը **2 (երկու) ամիս** է՝ պայմանագրի ստորագրման պահից:

Սույնով **«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը** հրավիրում է իրավասու խորհրդատվական ընկերություններին («խորհրդատուներ») հայտնել իրենց շահագրգռվածությունը ծառայությունների մատուցման համար: Շահագրգիռ խորհրդատուները պետք է ներկայացնեն տեղեկություններ (բրոշյուրներ, նման աշխատանքների նկարագրություններ, համանման պայմանների փորձ, աշխատանքն իրականացնելու համար տեխնիկական ռեսուրսների մատչելիություն, հիմնական աշխատակազմի ընդհանուր որակավորումներն ու թիվը և այլն), որոնք ցույց կտան, որ իրենք ունեն պահանջվող որակավորումներ և համապատասխան փորձ ծառայությունները կատարելու համար:

Կարճ ցուցակում ընդգրկվելու չափանիշները հետևյալն են.

(i) ընկերության ընդհանուր փորձը *(գործունեության հիմնական տեսակը և փորձը տարիներով)*- **20 միավոր;**

(ii) Ընկերության փորձը նմանատիպ աշխատանքներում *(վերջին 5 տարիների ընթացքում իրականացրած համանման աշխատանքների թիվը)*- **40 միավոր;**

(iii) հիմնական աշխատակազմի ընդհանուր որակավորումն ու թիվը *(CV-ները չի պահանջվում)* – **30 միավոր;**

(iv) Ընկերության տեխնիկական և կառավարչական կարողությունները (կառավարչական և կազմակերպական կառուցվածք, ուսումնական դահլիճի ու դասավանդման և դասընթացների անցկացման համապատասխան սարքավորումների հագեցվածություն և այլն)– 10 միավոր

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ *«Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎՁՄԲ-ի փոխառությունների և ՄՁԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, Հունվար 2011, վերանայված 2014թ. հուլիսին»* («Խորհրդատուների Ուղեցույցներ»), 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով *(Guidelines: Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers, January 2011, revised July 2014):*

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ **համատեղ ձեռնարկության** կամ **ենթախորհրդատվության** ձևով իրենց որակավորումներն ուժեղացնելու նպատակով *(խնդրում ենք հստակ նշել միավորման կարգավիճակը, օրինակ՝ «Համատեղ ձեռնարկություն» կամ «Ենթախորհրդատու»)*:

Խորհրդատուի ընտրությունն իրականացվելու է **Խորհրդատուների որակի վրա հիմնված ընտրության մեթոդով (CQS)**, որը սահմանվում է Խորհրդատուների Ուղեցույցներում:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ստորև նշված հասցեով աշխատանքային ժամերին՝ **ժ.10:00–17:00 (Երևանի ժամանակով), երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ**:

Շահագրգռվածության հայտը պետք է ներկայացվի **հայերեն** լեզվով գրավոր՝ տպված օրինակով կամ էլ. փոստով՝ **Adobe PDF** ձևաչափով ներքո նշյալ հասցեով **2015թ. փետրվարի 6-ին, ժ.17:00-ին կամ ավելի վաղ:** Շահագրգռվածության հայտի վրա պետք է հստակ նշվի՝ *«Շահագրգռվածություն հայտնելու հայտ «Ջրօգտագործողների ընկերությունների Վերստուգող հանձնաժողովների անդամների ուսուցում» ISEP/CQS/SW-14/004Tr»:*

«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ
Պրն. Մարտին Չարյան, գնումների մասնագետ
ՀՀ, Երևան 0033, Բաղրամյան պող. 75/44
Հեռ՝ (+37410) 277-943 (ընդունարան), 266-058 (գնումների բաժին)
Էլ. փոստ՝ mcharyan@wsdp.am; cc: tishkhanyan@wsdp.am

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել պրն. Տիգրան Իշխանյանին
հեռ. (37494) 475258: